



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ՍԱՄՍՈՆ ԴԱՎՅԱՆ

ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի տնօրեն,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՌՈԶԱ ԿՈՒՐՈՒՆՅԱՆ

ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի
ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի դասախոս

ԳՆԱԾԻ ՆՊԱՏԱԿԱՂՐՄԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ ՀՀ-ՈՒ

Ելեկով համաշխարհային տնտեսության զարգացման ներկայիս միտումներից և Հյայաստանի տնտեսության զարգացման առանձնահատկություններից՝ կարևորվում է արդյունավետ տնտեսական քաղաքականության իրականացումը։ Այս համատեքստում կարևոր խնդիր են դրամավարկային քաղաքականության՝ մասնավորապես անվանական խարիսխների (գնաճ, փոխարժեք, դրամական ագրեգատներ) ընտրության հիմնավորումը և գնահատումը։ Հոդվածում քննարկվել են ՀՀ-ում դրամավարկային քաղաքականության նպատակադրումները (մինչև 2006 թ.՝ դրամական ագրեգատներ, 2006-ից՝ գնաճ) և հիմնախնդիրները։ Հոդվածում գնաճի, սոլիոսադրույթների՝ վերաֆինանսավորման և լոմբարդային ռեպո սոլիոսադրույթների, փողի բազայի և դրամական զանգվածի ժամանակային շարքերի (2008–2015 թթ. ամսական փոփոխություններ) հիման վրա կառուցված VAR մոդելի միջոցով նշվել է նաև գների մակարդակի փոփոխության մեջ յուրաքանչյուր գործոմի մասնակցության հարաբերական չափը։ Մոդելի միջոցով փորձ է արվել գնահատելու վերոնշյալ գործոնների փոփոխությունների հնարավոր ազդեցությունը գների մակարդակի վրա, ինչպես նաև բացահայտելու այդ ազդեցության լագերը և տարբեր լագերում դրանց հարաբերական ուժգնությունը։

Հիմնաբառեր. դրամավարկային քաղաքականություն, անվանական խարիսխ, գնաճի նպատակադրում, փոխարժեքի նպատակադրում, դրամական ագրեգատների նպատակադրում, վերաֆինանսավորման սոլիոսադրույթ, լոմբարդային ռեպո սոլիոսադրույթ, փողի բազա, դրամական զանգված, փոխանցումային մեխանիզմ

Ելնելով համաշխարհային տնտեսության զարգացման ներկա միտումներից և ՀՀ տնտեսության զարգացման առանձնահատկություններից (բացասական վճարային հաշվեկշիռ, արտաքին տնտեսական շոկերի ռիսկի առկայություն, արտաքին հատվածից ներմուծվող գնած, ինչպես նաև բնական ռեսուրսների սակավություն և շուկայական ինստիտուցիոնալ համակարգի թերզարգում)՝ կարևորվում են ՀՀ տնտեսական քաղաքականության բաղկացուցիչ մաս կազմող դրամավարկային քաղաքականության (ԴՎՔ), մասնավորաբեն՝ անվանական խարսխի ընտրության հիմնավորումը և առկա հիմնախնդիրների բացահայտումը:

1994 թվականին ՀՀ ԿԲ-ը որպես դրամավարկային կարգավորման տարբերակ ընտրեց փողի ագրեգատների նպատակադրուման ռազմավարությունը: 1996 թվականին վերջինս ամրագրվեց նաև «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով¹, ըստ որի ԿԲ գլխավոր նպատակը գնածի կայուն և ցածր մակարդակի ապահովումն էր (նախկինում՝ արժույթի ներքին և արտաքին կայունությունը)²: Ներկայում ՀՀ սահմանադրությամբ ԿԲ հիմնական նպատակներից է ինչպես գների մակարդակի, այնպես էլ ֆինանսական կայունության ապահովումը:

Գնածի կայուն և ցածր մակարդակ ապահովելու համար որպես ԴՎՔ միջանկյալ և գործառնական նպատակներ սահմանվեցին, համապատասխանաբար՝ փողի զանգվածը և փողի բազան: Այս գործընթացում ԴՎՔ գործիքներ էին համարվում իրացվելիություն ներարկող լոնքարդային վարկերը, ռեպորտ, բաց շուկայական և արտարժույթի առքի գործառնությունները, ավանդային սակարկությունները: Փողի ագրեգատների նպատակադրման ռազմավարության իրականացմանը ՀՀ ԿԲ-ին հաջողվեց ապահովել մակրոտնտեսական կայունություն՝ նվազեցնելով և կայունացնելով գնածը: Գնածն արդեն կառավարելի դարձավ 1994 թվականի երկրորդ կիսամյակում: 1995 թվականը շրջադարձային էր. աշխուժացած տնտեսությունը, նախորդող տարիների տնտեսական անկումից հետո արձանագրվեց 5.7% տնտեսական աճ, իսկ գնածը կազմեց 32.2%³: 1995–1998 թվականներին գնածի աստիճանաբար կայունացող տատանումներից հետո ՀՀ տնտեսությունը ցածր գնածային միջավայրում էր: Ցածր գնածը զուգորդվում էր բարձր՝ 2003 թվականից արդեն երկնիշ տնտեսական աճով (13.9%), որը շարունակվեց մինչև 2008 թ., երբ ՀՀ-ն ևս իր վրա կրեց համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունը:

ԴՎՔ իրականացման ընթացքում փողի ագրեգատների նպատակադրման ռազմավարությունը շարունակաբար խնդիրներ էր հարուցում: Այս ռազմավարության առանցքն այն է, որ ԿԲ-ն իր գլխավոր նպատակին՝ գների կայունությանը պետք է հասնի մեկ ձանապարհով՝ նպատակադրելով փողի ագրեգատները և ապահովելով վերջիններիս ծրագրային ցուցանիշները:



Սակայն, մի շարք գործոններով (ֆինանսական շուկայի թերզարգացում, նոր ձևավորվող բանկային համակարգ, փողի պահանջարկի տատանողական վարքագիծ, բարձր դոլարայնացման պայմաններում փողի զանգվածում տեղի ունեցող կառուցվածքային փոփոխություններ, գնածի վրա ոչ մոնետար

¹ Տես «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքը, 1996 թ.:

² Տես Հայաստանի Հանրապետության 1994 թ. դրամավարկային քաղաքականության ծրագիրը:

³ Տես Հայաստանի վիճակագրական տարեգիրը. Statistical Yearbook of Armenia. Статистический ежегодник Армении, 2001:

գործոնների ազդեցություն՝ արտաքին շոկեր, և այլն)⁴ պայմանավորված, վոռողի ազրեզատների ծրագրային ցուցանիշների ապահովումը խիստ դժվարանում էր: Գլխավոր գործոնը վոռողի պահանջարկի տատանողականությունն էր, ինչի պատճառներից էին ֆինանսական ենթակառուցվածքների թերզարգացումը, ՀՀ-ում նոր ձևավորվող բանկային համակարգում տեղի ունեցող կառուցվածքային տեղաշարժերը, վարկավորման ծավալների աճի բարձր տեմպերը, դրամի արժևորմանը զուգընթաց դոլարայնացման մակարդակի նվազումը, ստացվող տրամաֆերտների աճի բարձր տեմպերը և այլն⁵: Արդյունքում՝ վոռողի պահանջարկը դառնում էր խիստ տատանվող, հետևաբար՝ դժվար կանխատեսելի:



Գօնակար 1. Գնաճի և վոռողի զանգվածի փաստացի և ծրագրային ցուցանիշները ՀՀ-ում 2000–2005 թթ.⁶

⁴ Տես ՀՀ կենտրոնական բանկի կողմից գնաճի նպատակադրման ռազմավարության ընդունման վերաբերյալ հայտարարությունը.

⁵ https://www.cba.am/Storage/AM/downloads/kanon/1_gnach_haytarar.pdf

⁶ Տես նոյն տեղը:

⁶ Այդուսակը կազմվել է ըստ ՀՀ կենտրոնական բանկի տվյալների:

Գնաճի և փողի ագրեգատների միջև կայուն կապի բացակայության, փողի բազայի և զանգվածի միջև կապի անկայունության հետ մեկտեղ առաջացավ և խորացավ նաև ԿԲ-ի կողմից փողի ագրեգատների լիարժեք կառավարման անհնարինության խնդիրը: ՀՀ ԿԲ-ն հաջողությամբ կառավարում էր փողի բազայի ցուցանիշը, սակայն փոխանցման մեխանիզմների անկատարությունը դժվարություններ էր առաջացնում փողի զանգվածի կառավարման հարցում: Ելնելով վերոնշյալ խնդիրներից՝ կարող ենք փաստել իրականացված ԴՎՔ անարդյունավետության մասին:

Այսուսակ 1-ում ներկայացված են փողի բազայի ու դրամական զանգվածի գնաճի և տնտեսական աճի միջև առկա կապը բնութագրող մեծությունները:

Այսուսակ 1

2000–2005 թթ. ՀՀ-ում դրամական զանգված–փողի զանգված–գնաճ–տնտեսական աճ կապը բնութագրող ցուցանիշները⁷

<i>Դրամական զանգված–տնտ.աճ</i>				<i>Փողի զանգված–տնտ.աճ</i>			
Ազդեցու- թյուն	Կորեյա- ցիայի գործ. (R _{xy})	Դետերմ. գործ. (R ² xy)	Նշանա- կալիու- թյուն	Ազդեցու- թյուն	Կորեյա- ցիայի գործ. (R _{xy})	Դետերմ. գործ. (R ² xy)	Նշանա- կալիու- թյուն
1% փոփ.՝ -0,013%	0,09	0.009	0,85	1% փոփ.՝ -0,086%	0.5	0.26	0.29

<i>Դրամական զանգված–գնաճ</i>				<i>Փողի զանգված–գնաճ</i>			
Ազդեցու- թյուն	Կորեյա- ցիայի գործ. (R _{xy})	Դետերմ. գործ. (R ² xy)	Նշանա- կալիու- թյուն	Ազդեցու- թյուն	Կորեյա- ցիայի գործ. (R _{xy})	Դետերմ. գործ. (R ² xy)	Նշանա- կալիու- թյուն
1% փոփ.՝ 0.038%	0.28	0.08	0.57	1% փոփ.՝ -0,018%	0.11	0.013	0.82

Այսպիսով՝ փողի զանգվածի և դրամական զանգվածի, գնաճի և տնտեսական աճի ռեգրեսիոն վերլուծությունները ցույց են տալիս, որ փողի ագրեգատները, մասնավորապես՝ փողի զանգվածը, չեն ծառայում որպես վստահելի անվանական խարիսխ (բացակայում էր դրամական զանգված–փողի զանգված–գնաճ տնտեսական աճ կապը) հատկապես գների կայունության համատեքստում:

Ուստի ՀՀ ԿԲ-ի առջև ծառացավ նոր անվանական խարիսխի ընտրության խնդիր, որը կարող էր լինել կամ **փոխարժեքի նպատակադրումը**, կամ **գնաճի ուղղակի նպատակադրումը**:

Հյայստանում, ինչպես և դոլարայնացման բարձր մակարդակ ունեցող բոլոր երկրներում, մշտապես շրջանառվում է փոխարժեքի այս կամ այն տիպի ամրագրման գաղափարը:

2006 թ. հունվարի 1-ից ՀՀ ԿԲ-ը, այլընտրանք չունենալով, պաշտոնապես անցում կատարեց **գնաճի նպատակադրուման ռազմավարության**: Այս ռազմավարության համատեքստում, որպես ԴՎՔ միջանկյալ նպատակ, գնաճի կանխատեսված մակարդակն է: Որպես ԴՎՔ հիմնական գործիք սահմանվեց վերաֆինանսավորման տոկոսադրույթը, իսկ գնաճի ծրագրային մակարդակ՝ $4 \pm 1,5\%$ միջակայքը: Գնաճի նպատակադրուման ռազմավարությանն ան-

⁷ Այսուսակը կազմվել է ըստ ռեգրեսիոն վերլուծության արդյունքների՝ ՀՀ ԿԲ և ԱՎԾ տվյալների հիման վրա:

ցումն ու դրա իրականացումը Հայաստանում գերծ չէին նաև իհմնախնդիրներից: Դրանցից են ֆինանսական շուկայի թերզարգացումը, փոխանցման մեխանիզմների անկատարությունը, հարկաբյուջետային որոշ գերակայության առկայությունը, գնաճի անբողջական մոդելի բացակայությունը, ակտիվների գների անվերահսկելիությունը և այլն: Ընդհանուր առնամբ, Հայաստանում գնաճի նպատակի իրագործումը միշտ բախվում է զգալի դժվարությունների: Որպես փոքր բաց տնտեսություն՝ Հայաստանը կրում է արտաքին աշխարհի բազմաբնույթ մարտահրավերների զգալի ազդեցությունը և համաշխարհային տնտեսության, և հումքային ապրանքների միջազգային գների տատանողականության հետ կապված: Բացի այդ, Հայաստանում, պայմանավորված նաև սպառողական զամբյուրում (44.99%)⁸ պարենի զգալի կշռով, գյուղատնտեսության ոլորտի մեծ տատանողականությունը լրացնում է խնդիրներ և ստեղծում կարձաժամկետ հատվածում գների կայունությունը ապահովելու առումով:

Անհրաժեշտ է նաև համակարգված վերլուծել գնաճի և այլ առանցքային տնտեսական ցուցանիշների՝ վերաֆինանսավորման տոկոսադրույթի, փողայնացման մակարդակի, փոխարժեքի, միջազգային պահուստների, առևտրային հաշվեկշռի հետ կապը⁹:

Աղյուսակ 2

Գնաճի և մակրոտնտեսական ցուցանիշների պատճառահետևանքային կապերը
ՀՀ-ում 2008–2015 թթ. (ամսական շարժման ռեզուտիվ պերլուծության հիման վրա)¹⁰

Գնաճ	Աղյուսություն	Կապ	Կապի սերտության աստիճան	Ղետերմինացիայի գործակից	(F)
Միջազգային պահուստներ	Գնաճի 1% ↑ միջ. պահ. -1,1% ↓	հակադարձ	0.21	0,044	0,076
Փոխարժեքի տատանում	Գնաճի 1% ↑ փոխարժեքի 0.44% ↑	ուղիղ	0.23	0.05	0.019
Դոլար. մակ.	Դոլ. մակ. 1% ↑ գնաճի 0.03% ↑	ուղիղ	0.0	0.003	0.6
Փողայնացում	Փող. մակ. 1% ↑ գնաճի 0.1% ↓	հակադարձ	0.29	0.082	0.17
Արևոտրային հաշվեկշռի ձեղքածք	Գնաճի 1% ↑ առևտր. հաշվ. ձեղք. 1.07% ↑	ուղիղ	0.09	0.8%	0.5
Ներմուծման գների ինդեքս	Ներմուծ. գների 1% ↑ գնաճի 0,06% ↑	ուղիղ	0.25	0.05	0.016
Գյուղատնտեսության հիմնացման ինդեքս	Գյուղմ. գների 1% ↑ գնաճի 0,09% ↑	ուղիղ	0.54	0.3	7.92E-0,8
Դրամական զանգված	Գնաճի 1% ↑ դր. զանգվ. 0.77% ↓	հակադարձ	0.26	0.06	0.012
Վերաֆինանսավորման տոկոսադրույթը	Վերաֆին. տոկոսադր. 1% փոփ. ↑ գնաճի -0.24% ↓	հակադարձ	0.25	0.06	0.015

⁸ Տե՛ս ՀՀ կենտրոնական բանկ, դրամավարկային քաղաքականություն. www.cba.am/am/SitePages/1mpobjective.aspx

⁹ Գնաճը չափվում է սպառողական գների ինդեքսի միջոցով, որը սպառողական զամբյուրի մեջ ընդգրկված ապրանքների և ծառայությունների համապատասխան կշիռներով կշռված գների միջին մեծությունն է. www.cba.am/am/SitePages/1mpobjective.aspx


¹⁰ Աղյուսակը կազմվել է ըստ ռեզուտիվ պերլուծության արդյունքների՝ ՀՀ ԿԲ և ԱՎԾ տվյալների հիման վրա:

Աղյուսակ 3

Փոխարժեքի և մակրոտնտեսական ցուցանիշների պատճառահետևանքային կապերը
ՀՀ-ում 2008–2015 թթ. (ամսական շարժման փոփոքը հիման վրա)¹¹

ԱՄՆ դրամ/ՀՀ դրամ փոխարժեք	Ազդեցություն	Կապ	Կապի սերտության աստիճան	Տատանում՝ պայմ. զնամույթ	(F)
Միջազգային պահուստներ	Փոխ. 1% ↑ միջազգ.պահ. -0.92% ↓	հակադարձ	0,46	0,21	0,003
Գնաճ	Փոխ. 1% ↑ զնաճի 0.13% ↑	ուղիղ	0.23	0.05	0.019
Դոլար. մակ.	Փոխ. 1% ↑ դոլար. մակ. 0.84% ↑	ուղիղ	8.6	74.6%	1,44E-12
Փողայնացում	Փոխ. 1% ↑ փող. մակ. -0.04% ↓	հակադարձ	0.32	10.4%	0.18
Առևտրային հաշվեկշռի ճեղքածք	Փոխ. 1% ↑ առևտր. հաշվ. ճեղք. -2.5% ↓	հակադարձ	8.3	69%	3,34E-11
Ներմուծման գների հիմերս	Փոխ. 1% ↑ ներմուծ. գներ 0.72% ↑	ուղիղ	0,38	0.14	0.0001
Դրամական զանգված	Փոխ. 1% ↑ դր. զանգվ. -0.52% ↓	հակադարձ	0.32	0.10	0.001

Այսպիսով՝ անցնելով գնաճի նպատակադրմանը, ՀՀ պարագայում կարելի է առանձնացնել հետևյալ խնդիրները՝ փողայնացման ցածր մակարդակ, դոլարայնացման բարձր մակարդակ, առևտրային հաշվեկշռի բացասական ճեղքածք, ՀՀ դրամ/ԱՄՆ անվանական փոխարժեքի տատանումներ, ներմուծման գների ազդեցության մակարդակ, սպառողական զամբյուղում ներառված գյուղատնտեսական ապրանքների սեղոնայնություն, Էներգակիրների սակագներ և այլն:




Գօնակար 2. Դրամայնացման մակարդակը ՀՀ-ում 2006–2015 թթ.¹²

Գօնակար 2-ից երևում է, որ ՀՀ-ում 2015 թ., 2006 թ. համեմատությամբ, դրամայնացման ցուցանիշն աճել է 110.4 տոկոսով։ Դրամայնացման մակարդակի աստիճանական բարձրացումը հիմնավորված է գնաճի զայման տրամաբանությամբ։ Եվրոգույու տնտեսություններում նշված ցուցանիշը մոտ

¹¹ Աղյուսակը կազմվել է ըստ ռեզրեսիոն վերլուծության արդյունքների՝ ՀՀ ԿԲ և ԱՎԾ տվյալների հիման վրա։

¹² Տես <http://data.worldbank.org/country/armenia>.

100% է, զարգացած ասիական երկրներում՝ 150%-ից բարձր, Ռուսաստանում՝ 56% (2015 թ.): Համաշխարհային առաջատարն է Հոնկոնգը՝ 327%: Թայվանում այս ցուցանիշը կազմում է 213%, Հարավային Կորեյում՝ 128, Մալայզիայում՝ 120%, Սինգապուրում՝ 114%, Չինաստանում՝ 140%¹³:



Գծանկար 3. «Հոլարայնացման մակարդակը 2006–2015 թթ. (իունվար)¹⁴

Այսուսակ 2-ի և 3-ի տվյալները հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ ՀՀ-ում գնաճի 1% ավելացումը կիհանգեցնի փողայնացման մակարդակի 0,108%-ով նվազման, իսկ փոխարժեքի 1% աճը՝ փողայնացման մակարդակի 0,04% նվազման: Ուստի կարելի է արձանագրել, որ գների մակարդակի փոփոխության բացասական ազդեցությունը փողայնացման մակարդակի վրա ավելի մեծ է: Վերլուծության արդյունքները ավելի ակնառու են դարձնում նշված խնդրի կարևորությունը ՀՀ ԿԲ-ի համար: Թեև ՀՀ-ում վերջին տարիներին առկա է փողայնացման մակարդակի աճի միտում, սակայն դա դեռևս ցանկալի մակարդակի չի հասել, որը և պատճառ է դառնում փողի՝ որպես Կենտրոնական բանկի կողմից փոխանցունային մեխանիզմի կիրառման անարդյունավետության:

Հաշվի առնելով դոլարայնացման մակարդակի՝ որպես գնաճի նպատակադրման հիմնախնդրի առկայությունը՝ 2010 թվականից ՀՀ ԿԲ-ը և ՀՀ Կառավարությունը սկսեցին ապադուրայնացման միջոցառումներ իրականացնել: Դրանց շնորհիվ՝ եթե 2010 թ. դոլարայնացման մակարդակը ՀՀ-ում կազմել է 69,8%, ապա 2011 թ. նվազել է 3.7%-ով՝ հասնելով 66.1%-ի, սակայն 2015 թվականին կազմել է 64,2%՝ 2014-ի 60,2%-ի դիմաց: Վերջինիս բարձր մակարդակը խնդրի է գնաճի նպատակադրման ռազմավարության իրականացման համար:


Այսուսակ 2-ի և 3-ի տվյալները փաստում են, որ ՀՀ-ում արժույթի 1% արժեգրկումը ԱՄՆ դոլարի նկատմամբ հանգեցնում է 0.8% դոլարայնացման մակարդակի ավելացման, և հակառակը. դրամի արժեկորումը կիհանգեցնի դոլարայնացման մակարդակի նվազման, կուռելյացիոն գործակիցը, որը 0.87 է, ցույց է տալիս կապի խտության բարձր աստիճանը: Ըստ դետերմինացիայի գործակի՝ դոլարայնացման տատանումների 74% ցուցանիշը պայմանավոր-

¹³Տես OECD iLibrary , World Bank, World economic Indicators.

¹⁴Տես ՀՀ կենտրոնական բանկի տարեգործք՝ 2006–2015 թթ.:

Ված է փոխարժեքի տատանմամբ, իսկ F նշանակալիության գործակցի բարձր մակարդակը ավելի է հստակեցնում վերոնշյալ դիտարկումը: Վերջին տարիներին նկատվում է թե՝ դրամային զանգվածում, թե՝ փողի զանգվածում գտնվող կանխիկ դրամի տեսակարար կշռի նվազում, որը եթե 2014 թ. դեկտեմբերին առաջինում կազմել է 43%, իսկ երկրորդում՝ 21%, ապա 2015 թ. դեկտեմբերին, հաճապատասխանաբար՝ 36,2% և 16,7%: Նկատենք, որ 2010 թ. դրամային զանգվածում այդ հարաբերակցությունը կազմել է 63%, իսկ փողի զանգվածում՝ 30%: Սա ցույց է տալիս, որ, չնայած դրամով ընդունվող ավանդների բարձր տոկոսարդույքներին, ավանդատուները հակված են ավանդները տրամադրել արտարժույթով: Սրանով են պայմանավորված ՀՀ-ում դոլարայնացման բարձր մակարդակի միտումները:


Ինչպես երևում է գնաճի և փոխարժեքի միջև կապից, գնաճի 1% բարձրացումը հանգեցնում է դոլարի նկատմամբ դրամի արժեզրկման՝ 0,44%-ով, և ՀՀ դրամի 1% արժեկորումը դոլարի նկատմամբ զարդարությունը կազմում է գնաճը 0,13 տոկոսային կետով: Երկու դեպքում էլ նշանակալիությունը գնահատվում է 0,012՝ 99,8%:



Գծանկար 4. ՀՀ միջազգային պահուստների շարժընթացը 2008–2016 թթ.
(ամսական, մյն ԱՄՆ դոլար)¹⁵

Այսուսակ 2-ի և 3-ի տվյալներից ելնելով՝ կարելի է եզրակացնել, որ գնաճի 1% փոփոխությունը հանգեցնում է միջազգային պահուստների -1.1 տոկոսային կետով փոփոխության, իսկ փոխարժեքի փոփոխությամբ պայմանավորված՝ ՀՀ միջազգային պահուստները փոփոխվում են -0.92 տոկոսային կետով: Այսինքն՝ երկու դեպքում էլ կապը հակադարձ ուղղվածության է, հաճապատասխանաբար՝ 0.076 և 0.003 նշանակալիությամբ: Արդյունքում պարզվեց, որ ՀՀ-ում միջազգային պահուստների մակարդակի վրա գնաճի բացասական ազդեցությունը ավելի մեծ է, և, հաշվի առնելով միջազգային ոլորտում արտարժության պահուստներին վերաբերող պահանջները, հարկ է ապահովել ներմուծման շուրջ չորս ամսվա ծածկույթ և կարճաժամկետ պարտավորությունների սպասարկման (մինչև 1 տարի) ավելի քան իինգ տարվա ծածկույթ: Բացահայտվեց նաև, որ ՀՀ-ում գոյություն ունի միջազգային պահուստների հիմնախնդիր՝ կապված 2013 թ. դրանց ծավալի նվազման հետ: Կարելի է եզրակացնել, որ պահուստների մակարդակը հասել էր այն սահմանին, երբ վտանգվում է արտաքին պարտավորությունների կատարումը:

¹⁵ ՀՀ Կենտրոնական բանկի տարեգրքեր՝ 2008–2016 թթ.:




Գծանկար 5. Վերաֆինանսավորման տոկոսադրույթի փոփոխությունը ՀՀ-ում 2008–2016 թթ.¹⁶

2008–2015 թթ. վերաֆինանսավորման տոկոսադրույթի ազդեցությունը գնաճի վրա ցույց տալու համար դիտարկենք դրանց փոփոխապահությունը: Այսպիսով՝ ըստ այդուսակ 3-ի արդյունքների, կարող ենք նշել, որ վերաֆինանսավորման տոկոսադրույթի 1% փոփոխությունը կիանգեցնի գնաճի -0.24 տոկոսային կետով փոփոխության՝ 0.015 նշանակալիությամբ: Սակայն, այնուամենայնիվ, դրանց միջև կապի խորությունը գնահատվում է թույլ՝ 0.24, հետևաբար՝ ՀՀ-ում հիմնախնդիր է համարվում նաև այն հանգանաքը, որ գործնականում վերաֆինանսավորման տոկոսադրույթի ազդեցությունը գնաճի վրա թույլ է, քանզի ՀՀ-ում փողի առաջարկի և պահանջարկի տարրերությունն ակնհայտորեն լրացվում է արտարժույթով, առկա է, ինչպես արդեն նշվեց, դոլարայնացման բարձր մակարդակ, ինչպես նաև բացասական առևտրային հաշվեկշռի պատճառով մեծ է ներմուծվող գնաճի ազդեցությունը, ներքին գներն էլ հիմնականում ունեն մենաշնորհային բնույթ: Դա վերաֆինանսավորման տոկոսադրույթի և գնաճի կապի թույլացման պատճառ է դարձել: Փոխանցումային մեխանիզմների, այդ թվում՝ վերաֆինանսավորման դրույթի արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ են որոշ նախապայմաններ: Դրանցից առաջնայինը ԿԲ-ի կողմից կարճաժամկետ կառավարվող տոկոսադրույթների և տնտեսությունում այլ տոկոսադրույթների փոփոխապահության բարձր աստիճանն է: Մյուսը տնտեսավարող սուբյեկտների՝ տոկոսադրույթներից կախված որոշումներ կայացնելու զգայնության աստիճանն է: Երկու դեպքում էլ անհրաժեշտ է ուժենալ զարգացած ֆինանսական շուկա՝ ֆինանսական միջնորդության բարձր աստիճանով և ֆինանսական բազմազան գործիքակազմով, որի զարգացման մակարդակը հիմնախնդիր է համարվում ԿԲ-ի համար գնաճի նպատակադրման ռեժիմում:

ԴՎՔ գործիքները լիարժեք չեն աշխատի նաև առևտրային հաշվեկշռի բացասական ձեղքվածքի կարևորագույն հիմնահարցի առկայության դեպքում: Ըստ այդուսակ 2-ի և 3-ի վերլուծության՝ ԱՄՆ դոլարի 1% արժևությունը կիանգեցնի ներմուծման գների 0.72% բարձրացման, որի նշանակալիության աստիճանը կազմում է 0.00016: Ներմուծման գների տատանումների 24.2%-ը պայմանավորված է փոխարժեքի փոփոխությամբ: Այսպիսով՝ առկա առևտրային հաշվեկշռի լուրջ ձեղքվածքի պայմաններում դրամի արժեքը կազմում է կնպաստի ներմուծվող ապրանքների գների աճին, որը, ենելով

¹⁶ Տես նույն տեղը:

ՀՆԱ-ի նկատմամբ ներմուծման առկա հարաբերությունից, կիրանի որոշակի գնաճ՝ Մասնավորապես՝ ներմուծման գների 1% աճը կիանգեցնի ՀՀ-ում 0.06% գնաճի ավելացման՝ 0.016 նշանակալիությամբ:



Գծանկար 6. ՀՀ առևտորային հաշվեկշրի մմացողութ 2008–2015 թթ.
(մն ԱՄՆ դրամ)

Ինչպես նշվեց, գնաճի նպատակադրման հիմնախնդիր են ստեղծում նաև տարբեր տարիներին գնաճի տատանումների պատճառ հանդիսացող զյուղմթերքի գների տատանումները¹⁷: Դրանց իրացման գների 1% փոփոխությունը կիանգեցնի գների մակարդակի 0.09 տոկոսային կետով փոփոխության: Ինչպես վկայում են արդյունքները, նշված գործոնների միջև կապը 0.55 է, իսկ Վերլուծության նշանակալիությունը՝ 4.92E-08:

Վերոնշյալ խնդիրների համատեքստում կարևոր նշանակություն ունեն ԴՎՔ փոխանցումային մեխանիզմների գնահատումը և Վերլուծությունը: ԴՎՔ-ն ամբողջական պահանջարկի վրա ազդում է տարբեր փոխանցման լծակների միջոցով՝ տոկոսադրույթ, փոխարժեք, վարկային, արժեթղթերի գների փոփոխություն, հարստության էֆեկտ, կանխիկ հոսքեր, իրացվելիություն և այլն¹⁸:

Տվյալ Վերլուծության առարկա են դրամավարկային փոխանցման տոկոսադրույթի, դրամական բազայի լծակները: Մյուս լծակներն առանձին չեն դիտարկվել, քանզի դրանք, ընդհանուր առմամբ, կարելի է համարել տոկոսադրույթի լծակից ածանցվող ազդեցություններ, և Վերջիններիս բացահայտման համար անհրաժեշտ է զարգացած և բազմազանեցված ֆինանսական շուկայի առկայություն: ՀՀ ԴՎՔ փոխանցումային մեխանիզմների (ՓՄ) և գնաճի նպատակադրման ռազմավարության գնահատում իրականացնենք VAR (vector autoregression) մոդելի միջոցով՝ EVIEWS համակարգային ծրագրի օգնությամբ:

VAR մոդելը բացահայտում է փոփոխականների փոփոխականվածությունը՝ ժամանակային որոշակի խզումով (լազու դիտարկելու միջոցով): Այսինքն՝ կիրառելով այս մոդելը, հնարավորություն կրնանանք պատկերացնելու, թե տնտեսությունում որևէ գործոնի ուղղվածության փոփոխությունները ինչպես են արտահայտվում մակրոտնտեսական ցուցանիշներում, և, որ ամենակարևորն է՝ երբ են այդ փոփոխություններն ի հայտ գալիս: Մեր հետազո-

¹⁷ Տես OECD iLibrary, World Bank, World Economic Indicators.

¹⁸ Տես ՀՀ կենտրոնական բանկի կողմից գնաճի նպատակադրման ռազմավարության ընդունման հիմնավորում, էջ 12:

տության նպատակն է գնաճի, սոլյուսադրույթների (Վերաֆինանսավորման և լոմբարդային ռեպո), փողի բազայի և դրամական զանգվածի ժամանակային շարքերի (2008–2015 թթ. ամսական փոփոխություններ) հիման վրա կառուցված VAR մոդելի միջոցով գնահատել գների մակարդակի փոփոխության մեջ յուրաքանչյուր գործոնի մասնակցության հարաբերական չափը: Մոդելի միջոցով փորձ է արվել գնահատելու վերոնշյալ գործոնների փոփոխությունների հնարավոր ազդեցությունը գների մակարդակի վրա, ինչպես նաև բացահայտելու այդ ազդեցության լազերը և տարբեր լազերում դրանց հարաբերական ուժգնությունը:

Նշենք նաև, որ նախքան մոդելի կառուցումը իրականացվել են Գրենցերի պատճառահետևանքային գույքային թեստեր՝ ստուգելու համար Վերոնշյալ փոփոխականների միջև պատճառահետևանքային կապի վարկածները:

Աղյուսակ 4

Գնաճի և փոփոխանցման լժակների՝ Գրենցերի պատճառահետևանքային կապի վարկածի ստուգման թեստի արդյունքները¹⁹

Վերաֆինանսավորման սոլյուսադրույթ–գնաճ	0.91 հավանականություն
Փողի բազա–գնաճ	0.9998 հավանականություն
Դրամական զանգված–գնաճ	0.9978 հավանականություն

Փոփոխականների լազերի երկարությունը ընտրվել է՝ նվազագույնի հասցնելով Շվարցի հնֆորմացիոն տեղեկատվական չափանիշները (SIC), իսկ որակյալությունը ստուգվել է J-վիճակագրի հավանականային արժեքով (Prob(J-statistic)):

Կիրառվել է նաև յուրաքանչյուր գործոնի ժամանակային շարքերի ստացիոնարության ստուգման Դիկեյ-Ֆուլերի թեստ, որի արդյունքները վկայում են այդ շարքերի կայունության մասին. ուստի հնարավորություն է տալիս կատարելու գնահատումներ VAR մոդելով:

Աղյուսակ 5


Ժամանակային շարքերի ստացիոնարության ստուգման Դիկեյ-Ֆուլերի թեստի արդյունքները²⁰

Թնականոն գնաճ	0.999h	Դրամական զանգված	0,999h	Վերաֆինանսավորման սոլյուսադրույթ	0.91h
Գնաճ՝ ՍԳԻ	0.999h	Փողի բազա	0,999h	Լոմբ. ռեպո սոլյուսադրույթ	0,992h

Անցնելով մոդելի կառուցմանը՝ նախ նշենք, որ ներկայում ՀՀ ԿԲ-ի կողմից իրականացվող ԴՎՔ հիմքում ծավալային կարգավորման ռազմավարկան ուղղությունն է: Այդ համատեքստում, իր գլխավոր նպատակի ապահովման ձանապարհին, ՀՀ կենտրոնական բանկը փորձում է հատուկ հետևողականություն ցուցաբերել գների ծրագրված մակարդակի ապահովման հարցում՝ սոլյուսադրույթների փոփոխության միջոցով:

¹⁹ Աղյուսակը կազմվել է EVIEWS համակարգչային ծրագրի Granger Causality թեստի միջոցով:

²⁰ Աղյուսակը կազմվել է EVIEWS համակարգչային ծրագրի Դիկեյ Ֆուլերի թեստի միջոցով:



Գծանկար 7. «ՀՀ-ում վերաֆինանսավորման, լոմբարդային ռեպո տոկոսադրույքի և գնաճի մակարդակի ամսական փոփոխությունների շարժմանը 2008–2015 թթ.²¹

Այլուսակ 6

Գնաճի և վերաֆինանսավորման տոկոսադրույքի ու լոմբարդային ռեպո տոկոսադրույքի պատճառահետևանքային կայք «ՀՀ-ում (2008M1-2015M12)²²

ՓՄ	ՓՄ փոփոխություն	Գնաճի փոփոխություն	Գնաճի 1% փոփոխության հետևանքով ՓՄ փոփոխությունը 1 ամիս անց	
			1 ամիս անց	0.02%
Վերաֆինանսավորման տոկոսադրույք	1 %	-0.21%		
Լոմբարդային ռեպո	1%	0.06%		0.008%

Վերլուծության արդյունքները հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ «ՀՀ գնաճի վրա ավելի մեծ ազդեցություն ունի ԿԲ-ի կողմից իրականացրած վերաֆինանսավորման տոկոսադրույքի փոփոխությունը: Մասնավորապես՝ «ՀՀ-ում վերաֆինանսավորման տոկոսադրույքի 1%-ով բարձրացնելը մեկ ամիս հետո հանգեցնում է գնաճի զանգան՝ -0.21 տոկոսադրույքի 1%-ով ավելացնելը հանգեցնում է այսօրվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի 0.02 տոկոսային կետով ավելացնան: Գնահատման արդյունքում պարզվել է նաև, որ ԿԲ-ը, ներկա պահին սահմանելով վերաֆինանսավորման տոկոսադրույքի մակարդակ, հաշվի է առնում ոչ միայն գնաճի ցուցանիշը, այլև տոկոսադրույքի նախորդ ժամանակահատվածի արժեքները (0.8 տոկոսային կետով): Այսինքն՝ ԿԲ-ը իրականացնում է տոկոսադրույքի հարթեցում. վարքագիծ, որ բնորոշ է գրեթե բոլոր ԿԲ-երին՝ առավել ևս զարգացող ֆինանսական համակարգ ունեցող երկրներում: Նման գործողությունը հնարավորություն է տալիս տոկոսադրույքների կտրուկ տատանումների դեպքում խուսափելու ֆինանսական շուկայում հավանական անկայունության առաջացումից:


²¹ Այլուսակը կազմվել է ըստ «ՀՀ կենտրոնական բանկի ամսական տեղեկագրերի տվյալների:

²² Այլուսակում EVIDEWS համակարգային ծրագրի միջոցով VAR մոդելի ամփոփ արդյունքներն են (2008–2015 թթ.):

Այլուսակ 7

Գնաճի «շեղման տարանջատումները»՝ պայմանավորված փողի բազայի, վերաֆինանսավորման տոկոսադրույթի, գնաճի և դրամական զանգվածի 1% փոփոխությամբ²³

Ժմկ միջակայք	Վերաֆինանսավորման դրույթ	Լոմբարդային ռեպյուտ	Դրամական բազա	Դրամական զանգված	Գնաճ
1	0.664	0.929	1.776	6,399	90.231
2	4.203	0.879	1.820	21.690	71.406
3	4.675	1.475	1.883	21.268	70.721
4	5.236	1.576	1.909	21.155	70.123
5	5.592	1.582	1.908	21.070	69.845
6	5.877	1.592	1.904	21.003	69.620
7	6.087	1.671	1.899	20.940	69.401
8	6.241	1.831	1.893	20.871	69.162
9	6.350	2.055	1.886	20.797	68.909
10	6.425	2.319	1.879	20.722	68.652



Գծանկար 8. Գնաճի «շեղման տարանջատումները»՝ պայմանավորված փողի բազայի, վերաֆինանսավորման տոկոսադրույթի, գնաճի և դրամական զանգվածի փոփոխությամբ²⁴

Ըստ այլուսակ 7-ի և գծապատկեր 8-ի տվյալների՝ ՀՀ-ում, կարձաժամկետ հատվածում, վերոնշյալ գործուների մասնակցությունը գնաճի վարժագծի տատանումներին նշանակալի չէ. մասնավորապես՝ առաջին ամսում գնաճի տատանումների 6,4%-ը կարելի է բացատրել փողի բազայի փոփոխություններով և 1.8% դրամական զանգվածի տատանումներով: Սակայն արդեն երկրորդ ամսից սկսած՝ փողի բազայի ազդեցությունը գնաճի վարժագծի ձևավորման վրա դառնում է նշանակալի և առավելագույնի է հասնում 2–5-րդ ամսներին՝ կազմելով 21%, իսկ գնաճի տատանումները, պայմանավորված դրամական զանգվածի փոփոխություններով, առավելագույնի են հասնում առաջին կիսամյակից հետո՝ պայմանավորելով գնաճի տատանումների գրեթե 2%-ը: Անցնելով տոկոսադրույթների ազդեցությանը՝ նշենք, որ, վերաֆինանսավորման և ռեպյուտ տոկոսադրույթների փոփոխության հետ կապված, գնաճի տատանումները թեև առաջ են գալիս առաջին ամսում, սակայն պայմանավորում են գնաճի տատանումների, համապատասխանաբար՝

²³ Այլուսակը կազմվել է ըստ EVIEWs համակարգային ծրագրի VAR մոդելի Variance Decomposition թեստի արդյունքների:

²⁴ Այլուսակը կազմվել է ըստ EVIEWs համակարգային ծրագրի VAR մոդելի Variance Decomposition թեստի արդյունքների:

0.9%-ը և 0.6%-ը: Եթե վերաֆինանսավորման տոկոսադրույթի ազդեցությունը երկրորդ ամսում կտրուկ ավելանում է՝ կազմելով 4% և առավելագույնի է հասնում 10-րդ ամսում՝ պայմանավորելով գնաճի տատանումների 6%-ը, ապա լոմբարդային ռեպո տոկոսադրույթի մասնակցությունը գնաճի տատանումներին շարունակում է մնալ չնչին՝ առավելագույնը 2.32%: Նշվածը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ <<-ում տոկոսադրույթի ազդեցությունը թույլ է գնաճի փոփոխություններում, որը, թերևս, բացատրվում է <<-ում ֆինանսական շուկաների թերզարգացմամբ, փողայնացման ցածր մակարդակով և դոլարայնացման բարձր մակարդակով:

Այլուսակ 8

VAR մոդելի միջոցով հաշվարկված ամսական գնաճի փոփոխությունները՝ ի պատճինան փողի բազայի, դրամական զանգվածի, վերաֆինանսավորման դրույթի, և ռեպո տոկոսադրույթի 1% դրական շոկի²⁵

Ժմկ միջավայր	Լոմբարդային ռեպո	Վերաֆինանսավորման տոկոսադրույթ	Դրամական բազա	Դրամական զանգված
1	0.000	0.000	0.000	0.000
2	0.0078	-0.0709	0.3057	0.2713
3	0.0683	-0.0920	-0.1827	-0.1489
4	0.0355	-0.0937	-0.0217	-0.1079
5	0.0007	-0.0880	0.0483	-0.0504
6	-0.0281	-0.0798	0.1775	0.1029
7	-0.0496	-0.7101	0.0118	0.2106
8	-0.0644	-0.6224	-0.221	0.0263
9	-0.0735	-0.0545	0.0943	0.1942
10	0.0781	-0.0472	-0.004	0.0823

Այսպիսով՝ ելնելով վերլուծության արդյունքներից, կարող ենք փաստել որ <<-ում ԿԲ-ի կողմից ԴՎՔ իրականացման գործիքները՝ վերաֆինանսավորման դրույթի 1% դրական շոկի, ի տարբերություն լոմբարդային ռեպո տոկոսադրույթի 1% դրական շոկի, իր ազդեցությունն է ունենում գնաճի մակարդակի վրա՝ սկսած 2-րդ ամսից՝ նվազեցնելով գնաճը -0,07 տոկոսային կետով, և այդ ազդեցությունը առավելագույնի է հասնում 3–5-րդ ամիսներին (շուրջ -0,10 տոկոսային կետ): Ինչ վերաբերում է լոմբարդային ռեպո տոկոսադրույթին, ապա դա իր բացասական ազդեցությունն է ունենում գնաճի մակարդակի վրա ավելի ուշ՝ միայն 6-րդ ամսից սկսած (-0,03%) և առավելագույնի է հասնում 9–10-րդ ամիսներին՝ կազմելով -0,078%: Անցնելով փողի բազայի և դրամական զանգվածի՝ գնաճի վրա 1% դրական շոկի ազդեցությանը՝ կարելի է նկատել, որ երկու դեպքում էլ գնաճի պատճինանը առավելագույնի է հասնում 2–3-րդ ամիսներին, համապատասխանաբար՝ 0.3 և 0.27 տոկոսային կետով, որից հետո ազդեցությունը 2 դեպքում էլ նվազում է: Ըստ վերլուծության արդյունքների՝ դրամական զանգվածի 1% դրական շոկը 4–5-րդ ամիսներին համգեցնում է գնաճի նվազման՝ առավելագույնը -0,17, սակայն հաջորդ ամսից գնաճի պատճինանը կրկին դրական դրսևորում է ստանում՝ մասնավորապես 7-րդ ամսում՝ առավելագույնը 0.21 տոկոսային կետ: Մյուս կողմից՝ գնաճի պատճինանը փողի բազայի 1% դրական շոկին, առավելագույնի հասնելով 2-րդ ամսում, հաջորդ ամսում ցույց է տալիս բա-

²⁵ Այլուսակը կազմվել է ըստ EVIEWS համակարգային ծրագրի VAR մոդելի Impulse Response to Cholesky One SD Innovations թեստի արդյունքների:

ցասական արձագանք, որից հետո, սակայն, ազդեցությունը կրկին դաշնում է դրական՝ 6-րդ ամսում կազմելով 0.18 տոկոսային կետ: Այսինքն՝ ՀՀ-ում և դրամական զանգվածի, և փողի բազայի աճը անմիջապես կհանգեցնեն գնաճի ավելացման, և եթե միջնաժամկետ հատվածում դիտվում է գնաճի որոշ չափով նվազում, այնուամենայնիվ, դա տևում է ընդամենը 2 ամիս, որից հետո կրկին տեղի է ունենում գնաճի դրական արձագանք:

Ելնելով ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացվող ԴՎՔ փոխանցումային լծակների գնաճի վրա ազդեցության գնահատականներից՝ կարելի է ասել, որ վերաֆինանսավորման տոկոսադրույթի օգտագործումը հաջողված է, սակայն ոչ երկարաժամկետ հատվածում, քանի որ գնաճի վրա վերաֆինանսավորման դրույթի լագերի քանակի ավելացմանը զուգահեռ նվազում է բացասական ազդեցությունը գնաճի վրա, մյուս կողմից՝ գնաճի տատանումների ընդամենը 10%-ն է բացատրվում վերաֆինանսավորման դրույթի փոփոխությամբ, քանի առկա է դոլարայնացման բարձր մակարդակ, և առևտրային հաշվեկշռի ճեղքվածքի պատճառով մեծ է ներմուծվող գների ազդեցությունը:

Կարևոր է փաստել, որ փոխանցման մեխանիզմների արդյունավետ գործողության համար պետք է ունենալ զարգացած ֆինանսական շուկա՝ ֆինանսական միջնորդության բարձր աստիճանով, քանի որ, շուկայի սուբյեկտների տոկոսադրույթներից կախված, որոշումներ ընդունելու զգայունությունը կախված է ֆինանսական շուկայում առկա գործիքակազմով:

Ուստի, դրամավարկային քաղաքականության, հետևաբար նաև որպես ռեժիմ ընտրված գնաճի նպատակադրման արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ են հաջորդական, համակարգված քայլեր՝ հաշվի առնելով գնաճի և մակրոտնտեսական այլ ցուցանիշների փոխկապվածությունը:

Օգտագործված գրականություն

1. ՀՀ կենտրոնական բանկի մասին ՀՀ օրենքը /1996 թ., լրացումներով, փոփոխություններով/:
2. ՀՀ կենտրոնական բանկի կողմից գնաճի նպատակադրման ռազմավարության ընդունման վերաբերյալ հայտարարություն. https://www.cba.am/Storage/AM/downloads/kanon/1_gnach_haytarar.pdf
3. Հայաստանի Հանրապետության 1994 թ. դրամավարկային քաղաքականության ծրագիրը:
4. ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքէջ. www.armstate.am
5. Համաշխարհային բանկի պաշտոնական կայքէջ. www.worldbank.org
6. Արժույթի միջազգային հիմնադրամի պաշտոնական կայքէջ. www.imf.org/yerevan
7. Establishing and Maintaining a Firm Nominal Anchor Andrew Levin International Monetary Fund 2014.
8. Mussa Michael and others (2000), Exchange Rate Regimes in an Increasingly Integrated World Economy, IMF Occasional Paper No. 193 (Washington, International Monetary Fund).
9. Central Banking and Monetary Policy: An Introduction by AP Faure Rhodes University 2013.

САМСОН ДАВОЯН*Директор АГЭУ ГФ, доктор экономических наук, профессор***РОЗА КУРГИНЯН***Преподаватель кафедры экономики АГЭУ ГФ*

Научные и практические основы таргетирования инфляции в Армении.

Исходя из текущих тенденций развития мировой экономики и особенностей развития экономики Армении, подчеркивается важность осуществления эффективной и обоснованной экономической политики. В этом контексте важной задачей является выявление и оценка обоснования выбора и оценки денежно-кредитной политики, в частности, номинальных якорей: инфляции, валютных курсов, денежных агрегатов. В статье рассмотрены цели и проблемы денежно-кредитной политики в Армении (до 2006 года – денежные агрегаты, начиная с 2006 года – инфляция). В статье по модели VAR, которая построена на основе инфляции, процентных ставок, а также ставок рефинансирования и ломбардного репо, денежной базы, временных рядов денежной массы (ежемесячные изменения 2008–2015 гг.), оценен относительный размер участия каждого фактора в изменении уровня цен.

С помощью модели сделана попытка оценить возможное влияние изменений вышеупомянутых факторов на уровень цен, а также определить лаги этого влияния и их относительную интенсивность.

Ключевые слова: денежная политика, номинальный якорь, таргетирование инфляции, таргетирование денежных агрегатов, процентные ставки, ставка репо, денежная база и денежная масса, механизм передачи.

JEL: G000, E52, E58, E59

SAMSON DAVOYAN*Director of ASUE GB, Doctor of Economics, Professor***ROZA KURGHINYAN***Lecturer at the Chair of Economics ASUE GB*

Scientific and Practical Fundamentals of Inflation Targeting in the RA.

Considering the current trends of development of the world economy and the features of development of the RA economy it is essential to implement reasonable and effective economic policy. In this context it is vital to reveal and assess the bases of monetary policy, such as inflation, exchange rate, monetary aggregates. In the article we discuss the objectives and issues of monetary policy. Furthermore, based on inflation, refinancing and lombard repo rates, money base and supply we have created VAR model and measured the comparative level

of participation of each factor in price level change. With the help of the model we have tried to assess the possible influence of the change of above-mentioned factors on the price level. Moreover, we have discovered the impact lags and their comparative strengths in different lags.

Key words: *monetary policy, nominal anchor, inflation targeting, targeting monetary aggregates, interest rates, lombard repo rate, monetary base and money supply, transfer mechanism.*

JEL: G000, E52, E58, E59